**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**
**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ**
**(արտահերթ)**

**ք. Երևան** **27.12.2020թ.**

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (Ինստիտուտ) Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստն անցկացվեց առկա և հեռավար եղնակներով: Ինստիտուտի Գիտական խորհրդի նիստերի դահլիճից (ք. Երևան, Ալեք Մանուկյան 11) առկա եղանակով նիստին մանակցում էր Խորհրդի 14 անդամ, իսկ հեռավար եղանակով՝ zoom հարթակով 3 հոգի: Նիստին ներկա էին հոգաբարձուների խորհրդի (Խորհուրդ) 24 անդամներից 17–ը:

Գրանցման թերթիկը կցվում է:

Ապահովված էր նիստի քվորումը:

Խորհրդի նախագահը նիստի վարման լիազորությունը էլեկտրոնային եղանակով գրավոր փոխանցել էր խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանին:

**Նիստն արձանագրեց՝**

Խորհրդի նիստի արձանագրության վարումը Գոհար Մամիկոնյանի խնդրանքով և Խորհրդի համաձայնությամբ իրականացրեց Ինստիտուտի իրավական ապահովման բաժնի ղեկավար Օֆելյա Պետրոսյանը՝ խորհրդի քարտուղար Անահիտ Ստեփանյանի հիվանդության պատճառով:

## Օրակարգ

1. 27.12.2020թ. Հոգաբարձուների խորհրդի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգի հաստատում:
2. Ռեկտորի տարեկան հաշվետվության լսում և գնահատում:

3. Ինստիտուտի 2020 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության (բյուջեի կատարողական) հաստատում:
4. Ինստիտուտի 2021 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

**Օրակարգի առաջին հարցով (զեկուցող՝ Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյան՝ ըստ նախապես պատվիրակման)**

Խորհրդի անդամ Գ. Մամիկոնյանը ներկայացրեց 27.12.2020 թվականի օրակարգը և առաջարկեց հաստատել: Օրակարգը հաստատվեց առկա եղանակով նիստի ներկա բոլոր անդամների կողմից՝ 14 կողմ, 0՝ դեմ:

Նիստի օրակարգը հաստատվեց:

**Օրակարգի երկրորդ հարցով (զեկուցող՝ ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան)**

Հաշվետվությամբ հանդես եկավ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Խիթարյանը՝ ներկայացնելով իր պաշտոնավարման օրվանից ընդհանուր՝ 16 ամսվա Ինստիտուտի գործունեության հաշվետվությունը:

Հաշվետվությամբ ներկայացվեց Ինստիտուտի գործունեությունը ըստ ուղղությունների՝ կառավարում, կրթություն և գիտություն, միջազգայնացում, պրակտիկա, ինստիտուցիոնալ հարաբերություններ, սոցիալական պատասխանատվություն:

Դ. Խիթարյանը ներկայացրեց, որ 2019-2020 ուսումնական տարվա ռեկտորի և Ինստիտուտի բարեփոխումների ռազմավարական նպատակները համահնչեցվել են Ինստիտուտի 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրի նպատակներին:

Կառավարման բարեփոխումների մեջ Դ. Խիթարյանը առանձնացրեց Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կառուցվածքը, որով հնարավորություն տվեց ուղղահայաց կառավարումը փոխարինել հորիզոնական կառավարմամբ՝ տալով կառուցվածքային ստորաբաժանումներին և կրթական ծրագերին մեծ ազատություն, միևնույն ժամանակ պատասխանատվություն:

Նոր կառուցվածքը Դ. Խիթարյանի ներկայացմամբ թույլ է տալիս Ինստիտուտում ստեղծել հակակշիռների մեխանիզմ, որը դաշտ է ստեղծել կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, օբյեկտիվության ցուցանիշի բարձրացման համար:

Արդյունավետ աշխատեց դեկանակտների փոփոխությունը, որը փոխանցվեց ուսումնագիտական բաժին: Նոր կառուցվածքով դեկանների վրա դրվեց կրթական ծրագերի համակարգման, այդ թվում բովանդակային մասով պատասխանատվությունը, որը նաև խթանեց կրթության և պրֆեսորադասախոսական կազմի որակի բարձրացմանը:

Պիլոտային եղանակով իրականացվել է կրեդիտային նոր համակարգը, որով գնահատականները մեկ օրվա ընթացքում մուտքագրվում էին համակարգ, սակայն համավարակը դժվարեցրեց համակարգի ամբողջական իրականացմանը:

Ռեսուրսների պլանավարման և ֆինանսների արդյունավետ կառավարման տեսանկյունից Դ. Խիթարյանը նշեց, որ Ինստիտուտը ունի վատ ժառանգություն այն մասով, որ կան բավականին չհավագարքրված ուսանողական վարձեր, որոնք կազմում են շուրջ 600 միլիոն դրամ:

Կառավարման արդյունավետության տարրերից Դ. Խիթարյանը առանձնացրեց տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը՝ որպես ձեռքբերում, քանի որ հնարավոր եղավ Ինստիտուտում զարգացնել էլեկտրոնային կառավարման որոշ տարրեր. նշեց, որ նախատեսվում էր ներդնել Malberry համակարգը, սակայն պատերազմի պատճառով այն տարաժամկետվել է 2021 թվական, Ինստիտուտը միացել է G-suite համակարգին:

Բաժինը վերապատրաստում է անցկացրել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ հեռավար եղանակով zoom հարթակի միջոցով ուսուցում անցկացնելու վերաբերյալ:

Մշակվել է Ինստիտուտի մասնագետների միջոցով Ինստիտուտի նոր կայք էջը, թարմացվել է ինստիտուտի ներքին ցանցը, բարձրացվել 10 անգամ դրա հզորությունը և պաշտպանվածության մակարդակը:

Դ. Խիթարյանը նշեց, որ վերջնական մշակման փուլում են գտնվում google classroom և կրեդիտային համակարգերը: Նախկին կրեդիտային համակարգում մուտք են ունեցել մոտ 6 հոգի, որով չի ապպահովել կրեդիտային համակարգի հուսալիությունը:

Նոր կրեդիտային համակարգ մուտքի իրավունք ունի մեկ հոգի, կլինի առավել պաշտպանված և հուսալի: Համակարգը վերջնականապես պատրաստ կլինի 2 ամսից:

Բարձրորակ կրթության մասով Ինստիտուտը մշակեց նոր կրթական ծրագրեր՝ գործատուի պահանջների հիման վրա, մասնավորապես կրթական ծրագերի բովանդակության էական փոփոխություններ տեղի ունեցան: Ինստիտուտը մեկ տարվա ընթացքում վերամշակել և մշակել է շուրջ 12 կրթական ծրագիր: Մշակվել և

ԿԳՄՍ նախարարություն է ուղարկվել «Սպորտի տուրիզմ» մագիստրոսական ծրագիրը՝ հաշվի առնելով շուկայի պահանջները:

Փոփոխություններ են կատարվել նաև ընդունելության նորմատիվների բովանադկության մեջ. մասնավորապես կինեզոլոգիա և լրագրություն մասնագիտություններում:

2019-2020 ուսումնական տարվա ձեռքբերումներից է եղել ընդունելության քննությունների տեսաձայնագրումը, ինչպես նաև ընդունելության հանձնաժողովների կազմում արտաքին մասնագետների ներգրավումը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համահունչ:

Ապահովվել է դիմորդների մեծ քանակ՝ շուրջ 700 հոգի, դիմորդների մեծ քանակությունը պայմանավորված էր բուհի նկատմամբ հասարակության վստահության մեծացմամբ, Ինստիտուտի գործունեության և բարեփոխումների մասին հասրակությանը ճիշտ ներկայացմամբ:

Մշակվել են հետբուհական կրթական ծրագրերը, որոնք իհարկե ամբողջացված չեն, ինչպես նաև ասպերանտների համար կազմակերպվեց փակ, գաղտնի գրավոր քննություն՝ օբյեկտիվությունը ապահովելու համար:

Արդիական հետազոտություն և նորարարություն նպատակում Ինստիտուտը առանձնացրել է հետբուհական կրթության և հետազոտության արդիականացում, կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներառում, մասնագիտական խորհրդի բացում, բազային լաբորատորիայի հիմնում, դրամաշնորհային գիտական ծրագերի մասնակցություն, Ինստիտուտի պարբերականի վերափոխումը հատկապես բովանդակային և որակական պահանջների մասով:

Ինստիտուտում ստեղծվել է գիտահամակարգող խորհուրդ, որը գիտական պարբերականում հրապարակվող հոդվածների ուսումնասիրություն է անում և 4 հոդված պարբերականին ներկայացվող պահանջները չբավարարելու համար հետ է ուղարկվել և չի տպագրվել: Ուսանողության համար ևս ստեղծվել է պարբերական, որը կթողարկվի 2021 թվականին:

Ինստիտուտի 75 տարվա պատմության մեջ առաջին անգամ ստեղծվել է ԺԳ 002 մասնագիտական խորհուրդ:

Ինստիտուտի 30 տարվա պատմության մեջ դրամաշնորհային 2 ծրագիր է ունեցել, մինչդեռ 16 ամսվա ընթացքում բուհը ներկայացրել է շուրջ 12 գիտական

դրամաշնորհային ծրագրեր՝ 2-ը՝ ERASMUS PLUS, մնացածը ներպետական ծրագրեր, 1 դրամաշնորհային համատեղ ծրագիր Երևանի պետական համալսարանի հետ շահել է:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հետ կապված Դ. Խիթարյանն առանձնացրեց, որ Ինստիտուտը պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները բուհի թափուր հաստիքները համալրել է մրցույթով: Նշեց, որ 17 թափուր հաստիքների համար անցկացվել են բաց մրցույթներ, որի համար ստացվել են 567 հայտ:

Հաշվետու տարում փոփոխվել են կրթական ծրագրերի բովանդակությունները, մասնավորապես առանձնացրեց լեզուների մասը, լեզուների 2 կիսամայակ ուսուցումը դարձել է 4, քանի որ գործատուների հետ հանդիպումներում գործատուները նշել են, որ մարզիչների համար շատ կարևոր է օտար լեզուների իմացությունը:

Պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական փոփոխությունները տեղի են ունեցել ֆիզիկական վերականգման ամբիոնում, մարզական լրագրության ամբիոնում՝ 50 տոկոս դասախոսական կազմի փոփոխություն, սպորտի կառավարման և մարքետինգի ամբիոնում, որտեղ հրավիրվել են ոլորտներում մեծ պրակտիկ փորձ ունեցող դասախոսներ:

90 տոկոսով փոփոխվել է սպորտի կառավարման և մարքետինգի կրթական ծրագիրը, որը իհարկե պիլոտային է:

Պրակտիկ դասախոսների ներգրավումը նաև նպաստեց պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացմանը, որի բացակայությունը խնդիր էր դիտվել հավատարմագրման գործընթացում:

Հաշվետու տարում 63 տարեկան բարձր դասախոսական կազմը նվազել է՝ հասնելով 12 տոկոսի, իսկ 36-60 տարեկանը բարձրացել է դառնալով 30 տոկոս:

Արդյունավետ ֆինանսական կառավարման և վճարման նոր ձևաչափի մշակման արդյունքում պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձերը բարձրացան 30 տոկոսով՝ մեկ ժամի համար նվազագույնը 6000, իսկ առավելագույնը՝ 8700 դրամ:

Գիտության զարգացմանը նպաստող մեկ այլ կարևոր ձեռքբերում ունի Ինստիտուտը, այն է դրամական մինչև 100 000 դրամ խրախուսում է տրվում այն դասախոսներին, ովքեր հրապարակումների ունեն միջազգային հեղինակավոր գիտական հանդեսներում. մասնավորապես web of science, scopus և այլն, ինչպես նաև վճարվում է վերոնշյալ պարբերականներում տպագրման ծախսերը:

Հաշվետու տարում scopus-ում Ինստիտուտը տպել է 5 գիտական հոդված, որը մինչ այդ երբևէ չի տպվել:

Բուհի համար կարևորություն ունեցող ձեռնարկների, մենագրությունների և այլ գրքերի համար բուհը ևս վճարում է տպագրական ծախսերը:

***Որակյալ ծառայություններ և ենթակառուցվածքներ***

29 միլիոն դրամի վերանորոգման և շինարարական աշխատանքներ են կատարվել: Լսարանների տխնիկական վերազինման համար ներդրվել է 37 միլիոն դրամ, որով ձեռք են բերվել 60-ից ավել համակարգչային տեխնիկա, 4 պրոյեկտոր, կամերաներ: Համեմատության համար 2017թ. բուհը ձեռք էր բերել 4 համակարգիչ:

Ինստիտուտում ստեղծվեց ներքին անվտանգության բաժին, որն արդյունավետորեն իրականացնում է ինչպես նախկին պահակային ծառայությունը, այնպես էլ տեսախցիկներով հսկումը, ուսումնական պրոցեսի պատշաճ հսկումը: Հաշվետու տարում Ինստիտուտում տեղադրվել են 25 տեսախցիկ: Տեղադրվել է անցագրային կետը, 2021 թվականին կստեղծվի էլեկտրոնային քարտեր և ուսանողների և աշխատակազմի համար: Բուհի ձեռքբերումներից մեկը նաև այն է, որ անվտանգության ծառայությունում ներգրավվել են երկու զինհաշմամդամ աշխատակից, դրանով ցույց տալով բուհի պատրաստակամությունը ներառական աշխատանքային միջավայր ստեղծելու գործում:

Բուհում ամբողջությամբ տեղադրվել է հակահրդեհային համակարգ: Հակահամաճարակային պահանջները բուհը կատարել է ամբողջությամբ:

Շրջանավարտների հետ տարվող աշխատանքը կաղում է ըստ Դ. Խիթարյանի, պայմանավորված նոր մասնագետի ուշ ներգրավմամբ, ինչպես նաև համաճարակով և պատերազմով: Շրջանավարտների բազա բուհը չի ունեցել, նոր բազան դեռևս մշակման փուլում է:

Կառուցվածքային փոփոխության արդյունքում բուհում ներդրվեց հանրային կապերի պատասխանատուի պաշտոնը, որի արդյունքում ստեղվեց PR ռազմավարությունը, բուհի ռեբերնդինգը կամ բրենդինգը: Ակտիվորեն վերագործարկվեց Ինստիտուտի ֆեյսբուքյան էջը, որը ունի շուրջ 7200 հետևորդ: Բուհում անցկացվեց առաջին անգամ հանրային կարծիքի ուսումնասիրություն: Մեկ տարվա մեջ տեղի է ունեցել մոտ 100 հանդիպումներ ԶԼՄ-ների հետ ներկայացնելով բուհը:

Համավարակի պայմաններում բուհը ակտիվ է եղել հասարակական պատասխանատվության տեսանկյունից, քանի որ կազմակերպվեցին համաճարակի

դիմակայման կամավորական խմբեր, որոնք իրենց օգնությունը տվեցին պետությանը և հասարակությանը: Պատերազմի ժամանակ իրականացվեցին ևս միջոցառումներ. մասնավորապես տեղեկատվական իրազեկման սեմինար, առաջին բուժօգնության դասընթացներ, որտեղ ներգրավված էին, ոչ միայն Ինստիտուտի ուսանողները, նաև այլ բուհերից ուսանողներ, Արցախում բուհի փրկարար ուսանողները 4 հերթափոխով իրենց օգնությունը ցույց տվեցին պատերազմի օրերին, կինեզիստ մասնագետները և ուսանողները իրենց օգնություն են ցույց տալիս վիրավոր զինվորներին, որոնք վերականգնողական կուրսերը շարունակում են Ինստիտուտում:

Հոգեբանության ամբիոնում ձևավորվեց թիմ Ա. Ստեփանյանի գլխավորությամբ, որոնք հոգեբանական աջակցություն ցուցաբերեցին զինվորներին:

Բուհի միջազգայնացման տեսանկյունից բուհը գրանցել է առաջընթացներ. մասնավորապես բուհի պատմության մեջ առաջին անգամ բուհում իրականացվում է օտար լեզվով կրթական ծրագիր օտարեկրյա ուսանողների համար: Նախապատրաստական բաժինը վերաբացվել է, որտեղ սովորում են 17 օտարերկրյա ուսանող՝ Իրանից, Գանայից, Լիբանանից և այլն:

Արտաքին կապերի ձեռքբերումներից է գործատուների ակտիվ ներգրավումը բուհի գործունեության մեջ: Հաշվետու տարում հուշագրեր են կնքվել շուրջ 11 կազմկերպությունների և պետական մարմինների հետ:

Ընդլայնվել է նաև միջազգային համագործակցության աշխարահագրությունը՝ ներառելով Ամերիկան, Հնդկաստանը:

Գրադարանի զարգացմանն ուղղված ծրագրեր է իրականացրել բուհը, որո իր վերջնական արդյունքը կտա 2021 թվականին:

***Հարց տվեց*** Խորհրդի անդամ Ա. Թամոյանը. եղել են վերանորոգումների առաջնահերթություններ:

Դ. Խիթարյանը նշեց, որ, 2020թ, բուհը որպես առաջնահերթություն համարել է ջեռուցման համակարգի օպտիմալացումը, էլեկտրաներեգիայի օպտիմալացումը՝ նորագույն լեդ լույսերի տեղադրմամբ, իրականացրել է ուսումնագիտական և հաշվապահական հաշվառման բաժինների վերանորոգումը, երկու լսարանների բարենորոգում:

Ա. Թամոյանը նշեց, որ ծանրամարտի և բռնցքամարտի ամբիոնի դահլիճում տաք ջուր չի եղել: Դ. Խիթարյանը նշեց, որ օգոստոս ամսից սկսած արդեն տաք և սառը ջրի հարցը լուծվել է: Ինչ վերաբերում է դահլիճի վերանորոգմանը, ապա կա

սեսմակայունության խնդիր, որը լուծվելուց հետո միայն կարող է իրականացվել դահլիճի վերանորոգումը:

Խորհրդի անդամ Վ. Գալուստյանը առաջարկեց համագործակցել Ինստիտուտի հետ հանրակացարանային հարցի լուծման մասով, այն ուսանողների մասով, ովքեր գալիս են Օլիմպիական քոլեջից: Համատեղ օգտագործվի քոլեջի հանրակացարանը:

***Օրակարգի երկրոդ հարցով. լսվեց և գնահատվեց ռեկտորի տարեկան հաշվետվությունը:***

**Օրակարգի երրորդ հարցով (զեկուցող՝ ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան)**

Դ. Խիթարյանը նշեց, որ մինչև տարեվերջ կատարողականում կլինեն որոշ թվային փոփոխություններ՝ կանխատեսումներ գազի, ջրի, լույսի մասով, որոնք կստանանք հունվար ամսին:

Փոփոխություն է եղել ուսման վարձի կետում, ռեկտորի ժ/պ–ի կարգադրություն է եղել քննությունից առաջ վճարել ուսման վարձը, բացառությամբ պատերազմի մասնակիցներին, քանի որ ուսման վարձերի պատքերի մասով բուհն ունի վատ ժառանգություն՝ ընդհանուր 600 միլիոն դրամ չհավաքագրված ուսանողական վարձ: Մեկ շաբաթվա ընթացքում խստացումների արդյունքում հավաքագրվել է 100 միլիոն դրամ:

*Օրակագի երրորդ հարցը դրվեց քվեարկության: Նիստին առկա եղանակով ներկա անդամները միաձայն կողմ քվերակեցին և հաստատեցին բյուջեյի կատարողականը:*

*14 կողմ, 0՝ դեմ:*

**Օրակարգի չորրորդ հարցով (զեկուցող՝ ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան)**

Դ. Խիթարյանը ներկայացրեց 2021 թվականի բյուջեն: Ներկայացրեց, որ իր կառավարման ժամանակահատվածում ավելացվել է 2 անվանական կրթաթոշակ:

Դ. Խիթարյանը նշեց, որ հնարավոր է ապագայում վերանայվեն ուսման վարձերը, մասնավորապես թանկ կրթական ծրագրերի դեպքում: Միաժամանակ նշեց, որ կարծես

թե ինչ որ չափով լուծումը գտել են ֆեդերացիաների տարածքների օգտագործումը ուսումնական գործընթացները կազմակերպելու հարցում՝ օրինակ գեղասահքի, հեծանվասպորտի, հրաձգության ֆեդերացիանները, որոով առայժմ չեն բարձրանա ուսման վարձերը:

Արհեստակցական կազմակերպությունը վերափոխվելու է ամբողջությամբ և կկազմակերպվեն նոր ընտրություններ և գործունեությունը կլինի առավել արդյունավետ:

Բյուջեի ծախսերը կազմվել է ամբիոնների և կառուցվածքային ստորաբաժանումների զեկուցագրերի հիման վրա:

Գ. Մամիկոնյանը առաջարկեց ներկայացնել այն կետերը, որոնք նոր են ավելացվել 2021 թվականի բյուջեյում: Դ. Խիթարյանը նշեց օրինակ՝ միջոցառումների ծախսային տողը, քանի որ հաշվետու տարում եղել են նման միջոցառումներ, սակայն ծախսերը եղել են վարչական տողից:

Նոր նախատեսվող ծախսային տող է. ֆիզիկական վերակագման լաբորատորիայի ստեղծումը, որը գործնական դասեր անցկացնելու համար շատ կենսական նշանակություն ունի: Նոր ստեղծվող լաբորատորիան կծառայի նաև մարզիկների, ինչպես նաև վիրավոր զինվորների վերականգման կուրսերի անցկացմանը:

Նոր ՀԾ ծրագրի ներդրման համար ծախսերը մեծացել են, բայց դրանով ապահովվելու է հաշվապահական հաշվառման միասնականությունը և արդյունավետությունը:

Հաշվապահական հաշվառման և օրենսդրության դրույթների թույլ տված սխալների պատճառով 2015-2019 թթ. հարկային ստուգումների արդյունքում Ինստիտուտը տուգանվել է 167 միլիոն ՀՀ դրամով:

Ավելացվել է ապահովագրության ծախսային տողը՝ կազմելով 18 միլիոն դրամ, որով հնարավոր կլինի ապահովել բոլոր աշխատակիցների բժշկական ապահովագրությունը:

Ընդհանուր բյուջեն Դ. Խիթարյանը նշեց, որ հաշվետու տարվա համեմատ ավելացվել է:

Օրակարգի չորրորդ հարցը դրվեց քվերկության: Նիստին առկա եղանակով ներկա անդամները միաձայն կողմ քվերակեցին և հաստատեցին 2021թ. բյուջեն:

14 կողմ, 0՝ դեմ:

***Խորհրդի նիստը վարող*** ***Գոհար Մամիկոնյան***

***Խորհրդի նիստն արձանագրող*** ***Օֆելյա Պետրոսյան***